ՀՀ ԿԳՄՄՆ

<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ Մայիսյան հերոսամարտերը

Մասնակցի անուն, ազգանունը՝ Մարիամ Խաչատրյան

Դպրոցը՝ Ավշարի միջն. դպրոց

Դասավանդած առարկան՝ Պատմություն

ք. Արարատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....…….....……3

Մայիսյան հերոսամարտերը.....4

Լրացուցիչ նյութ 9

Եզրակացություն…….....13

Թեմային դասավանդման մեթոդիկա…….....……..14

Օգտագործած գրականության ցանկ…….....……..16

Ներածություն

Մայիսյան հերոսամարտերը ամբողջ հայ ժողովրդի միասնական ուժի և ազգային հաղթանակն էր: Եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը:

Թեմայի արդիականացումը: Այժմ այդպիսի ժամանակաշրջանում ապրում ենք մենք, հենց հիմա՝երբ մեր օրերում Ադրբեջանի և Թուրքիայի հանրապետությունները հարձակվեցին մեզ պատմականորեն պատկանող Արցախի հանրապետության վրա, ավելին՝ այսօր էլ շարունակում է ձեռնարկել լայնածավալ ռազմական ագրեսիա Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա:

Նպատակները.

ա)սովորողներն ընկալեն, որ հերոսամարտերում մեր հերոսների թափված արյունը հնարաբորություն տվեց դնելու պետության հիմքը

բ) պատասխանատվություն ձևավորի իր կամքի, արդարության նկատմամբ

գ) ժողովրդավարական. Զարգացնել առավել պատասխանատու վերաբերմունք հայրենիքի ու պետականության նկատմամբ

դ) դաստիարակչական. Սիրո և հարգանքի զգացում հերոսամարտերին մասնակցած գործիչների նկատմամբ, նրանցից սովորելու, նրանց նմանվելու ձգտում

ե) զարգացման. ընդլայնել սովորողների մտահորիզոնը, զարգացնել միտքը, կամքը, համառությունը

Կոմպետենցիաների ձևավորում.

ա) պատասխանատվություն

բ) վերլուծելու, գնահատելու և պատմությունից դասեր քաղելու ունակություն:

Մայիսյան հերոսամարտերը

Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների օրերին Օսմանյանյան Թուրքիան, օգտվելով իր հզոր դաշնակից Գերմանիայի աջակցությունից, ինչպես նաև Կովկասյան ճակատի կազմալուծումից, 1918թ-ի հունվարի 28-ին, խախտելով Երզնկայի զինադադարը, (1917թ. Դեկտեմբերի 5) վերսկսել է ռազմական գործողությունները:

Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողումից հետո թուրքերը արշավեցին Արևելյան Հայաստան: 1918թ. Մարտի վերջին ընկավ Սարիղամիշը: Անդրկովկասյան կառավարության և կովկասյան բանակի հրամանատար, վրացի գեներալ-լեյտենանտ Ի. Օդիշելիձեն Ա. Չխենկելու հրամանով ապրիլի 11-12-ին գրեթե առանց կռվի, թշնամուն է հանձնել լավ ամրացած Կարսի բերդը, որի պաշտպանության հրամանատար էր նշանակվել գեներալ Թովմաս Նազարբեկյանը: Թուրք-անդրկովկասյան անջատ բանակցությունները Տրապիզոնում արդյունք չեն տվել, և Սեյմի պատվիրակությունը վերադարձել է Թիֆլիս: Ստեղծված իրադրությունից պարզ է դարձել, որ Թուրքիան չի բավարարվելու այդ պայմանագրով նախատեսված տարածքների բռնագրավմամբ և ներխուժելու է նաև Արևելյան Հայաստան:

Թուրքիայի ճնշմամբ Անդրկովկասի Սեյմը 1918թ.ապրիլի 9 (22)-ին վրաց մենշևիկների և ադրբեջանցի մուսավաթականների ջանքերով ընդունում է որոշում՝ երկրամասը Ռուսաստանից անջատելու մասին: Սեյմի հայ պատվիրակությունը, որը դեմ էր այդ որոշմանը, մնացել է փոքրամասնության մեջ: Վիճակն ամենևին չփրկեց Անդրկովկասը անկախ հայտարարելը: Չկար համերաշխություն Անդրկովկասի կառավարության ներսում և Սեյմում: Նոր կառավարության նախագահ, մենշևիկ Չխենկելին վարում էր ըստ էության թուրքամետ գիծ: Անդրկովկասի երեք հիմնական ազգերի անմիաբամությունն էր պատճառը, որ թուրքական զորքերը ռազմական հաջողություններ էին ունենում: Ադրբեջանցիները բացահայտ համակրում և օժանդակում էին թուրքերին:

Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միակամ էին: 1918թ. Ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն: Խորհրդակցությունը որոշեց «բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը»: Թուրքական զորքերի հաջողությունները հարկադրեցին Անդրկովկասյան կառավարությանը վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Սակայն ռազմական հաջողություններով արբեցած թուրքերն ամենևին մտադրություն չունեին բավարարվելու Բրեստի հաշտության պայմաններով:

1918թ. գարնանը թուրք-անդրկովկասյան պատերազմը վերաճել էր թուրք-հայկականի: Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ավելի անկաշկանդ էր դարձրել թուրքական զորքերին: «Կարս» զորամիավորումն առաջադրանք էր ստացել նվաճելու ողջ Արևելյան Հայաստանը, հասնելու Բաքու, Դաղստան և Հյուսիսային Իրան:

1918թ. Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը

1918թ. Մայիսի 15-ին, անցնելով Ախուրյան գետը, թուրքերը ներխուժել են Ալեքսանդրապոլ: Թուրքական երրորդ և չորրորդ բանակային զորախմբերը հրաման են ստացել Արարատյան դաշտով մտնել Երևան: Երևանյան ուղղությունը պաշտպանող մոտ 10-հազարանոց զորախմբի հրամանատար է նշանակվել գեներալ Մովսես Սիլիկյանը, որի սպայակույտը տեղակայված էր Վաղարշապատում՝ Գևորգյան ճեմարանի շենքում:

Սարդարապատի հերոսամարտ: Առաջին խմբավորումը մայիսի 21-ին հարձակվեց Սարդարապատի ուղղությամբ՝ Երևան ներխուժելու նպատակով: Թուրքական զորախմբի կազմում էին 36-րդ հետևակային դիվիզիան, հարվածային և սակրավորների մեկական գումարտակներ, հեծյալ գունդ, հետևակային մարտկոց (50 հրանոթ):

Մայիսի 22-ի վաղ առավոտյան տագնապով ղողանջեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի կոչնակները, բոլոր գյուղերի եկեղեցիների զանգերը: Ժողովուրդը զինվեց: Ջոկատներ կազմած աշխարհազորայինները շտապում էին միանալ հայ ազգային զորամասերին: Մարտերը շարունակվեցին մինչև մայիսի 26-ը: Ծանր կորուստներ կրելով թուրքական բանակը նահանջեց դեպի Ալեքսանդրապոլ: Սարդարապատի ճակատամարտն ավարտվեց թուրքական գերակշիռ ուժերի դեմ տարած լիակատար հաղթանակներով:

«Բազմաթիվ կամավորներ՝ ծեր և երիտասարդ, որոնց թվում էր և Էջմիածնի միաբան գիտնական Գարեգին եպս. Հովսեփյանցը, իբրև նոր ժամանակների Ղևոնդ Երեց, ռազմաճակատ էին շտապում»:[1]

Ճակատամարտում իրենց քաջությամբ աչքի ընկան ռուսական բանակի գնդապետ, հետագայում Հայաստանի Առաջին Հանրապետության գեներալ- լեյտենանտ Դանիել Բեկ- Փիրումյանը, ռուսական բանակի գնդապետ, հետագայում Հայաստանի Առաջին Հանրապետության գեներալ-մայոր Պողոս Բեկ- Փիրումյանը, փոխգնդապետ Կարո Հասանփաշայանը, կապիտան, հետագայում Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, եպիսկոպոս, հետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանցը, ապագա գրող Ակսել Բակունցը, բազմաթիվ ֆիդայիներ:

[1] Վիսցյան Ա ,Հայաստանի հանրապետություն, Երևան,1993,էջ 146:

«Ճակատը զինվոր չէր միայն՝ ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռվում էր թշնամու դեմ՝ « ազատություն կամ մահ» վճռական կամքով»:[2]

1968թ.-ին ճակատամարտի վայրում կառուցվեց Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը (հեղինակ՝ Ռաֆայել Իսրայելյան):

Բաշ-Ապարանի ճակատամարտ: Սարդարապատի ճակատամարտին զուգահեռ ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց դեպի Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից:

«Բռունցքը սեղմվելու սահման ունի, որից հետո այն դառնում է քարի պես ամուր: Սարդարապատում թուրքերը դեմ առան հայ ժողովրդի քարի պես սեղմված բռունցքին»:[3]

Մայիսի 23-ից Սիլիկյանն իր մարտակազմի մի ջոկատ է ուղարկել Բաշ-Ապարանի ճակատ՝ Դրոյի գլխավորությամբ:

Սարդարապատի հաղթության հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, զոր. Սիլիկյանը, դիմեց հայ ժողովրդին հետևյալ կոչով.

«Հայե՛ր, մեր քաջարի զորքերի հերոսական գործունեությունը շարունակվում է, և թուրք զորքերը նահանջում են»: [4]

Մայիսի 24-ին, Դրոյի զորաջոկատը (շուրջ 5 հազար մարդ) մտել է Ալի Քուչակ՝ Էսադ փաշայի հրամանատարությամբ դեպի Բաշ-Ապարան գնացող թուրքերին դիմակայելու նպատակով: Մայիսի 26-ին թուրք զորամասերն անցել են հարձակման: Կատաղի մարտերը շարունակվել են մինչև մայիսի 29-ը: Այդ օրը Բաշ-Ապարանի ճակատում ջախջախվել է հակառակորդի 2 գունդ և ոչնչացվել է ծանր հրետանին: Թշնամին, մարտադաշտում թողնելով 200-ից ավելի սպանված և մեծաքանակ ռազմավար, նահանջել է: Դրոյի զորքի կազմում թուրքերի դեմ կռվում էր եզդիների 1500-հոգանոց հեծյալ ջոկատը՝ Ջհանգիր աղայի գլխավորությամբ: Ճակատամարտում զոհվել է հայտնի հարյուրապետ Զեմլյակը (Հարություն Նասամյան):

Ղարաքիլիսայի ճակատամարտ: Թուրք-հայկական պատերազմի վճռական տեղամասերից էր նաև Ղարաքիլիսայի ճակատը: Ալեքսանդրապոլի անկումից հետո Ղարաքիլիսայի ուղղությամբ շարժվող թուրք զորամասը մայիսի 20-ին գրավել է Ջաջուռը, Աղբուլաղը, Ղալթաղչին, մայիսի 21-ին՝ Վորոնցովկան: Մայիսի 22-ին հայկական կորպուսի հրամանատարը (գեներալ Թովմաս Նազարբեկյան) և սպայակույտը

---

[2] Նույն տեղում:
[3] Հ. Թուրշյան, Ապրիլյան հերոսամարտը, Երևան 1969, էջ 147:
[4] Վիսցյան Ա ,Հայ ազատության հանրապետություն, Երևան 1993,էջ 148:

տեղափոխել են Դիլիջան: Ջալալօղլիի (Ստեփանավան) մոտ մայիսի 21-22-ի մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացել է Դսեղ գյուղում և հետագա գործողություններին չի մասնակցել:

Գեներալ Նազարբեկյանի հրամանով կորպուսի 1-ին դիվիզիան և 2 լեռնային մարտկոցներ փոխադրվել են Շահալի, մնացածները կենտրոնացել են Դիլիջանի մոտ: Ճակատամարտին մասնակցել է նաև Գարեգին Նժդեհը՝ իր հեծյալ գնդով (100 հեծյալ): Մարտեում աչքի են ընկել գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի զորամասը, հերոսաբար զոհված շտաբ-կապիտան Գուրգեն Տեր- Մովսիսյանի հրետանավորները և ուրիշներ:

«Այսպիսով՝ Ղարաքիլիսայում տեղի ունեցավ չորսօրյա արյունալի ճակատամարտ՝ որտեղ հայերը կռվեցին խիզախորեն և քաղաքը թուրքերին զիջեցին թշնամու թվական ու զինական գերակշռության ճնշման տակ»:[5]

Հայերը կրել են զգալի կորուստներ, մեծ էին նաև թուրքերի կորուստները, սակայն համալրում ստանալով՝ նրանք անցել են հակահարձակման և մայիսի 30-ին նահանջել են Դիլիջան: Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորել են հայ բնակչությանը, ավերել են բնակավայրերը: Ղարաքլիսայի ճակատամարտում մեծ կորուստներ պատճատելով թշնամուն՝ կասեցվել է նրա գերակշիռ զորքի առաջխաղացումը դեպի Դիլիջան և Թիֆլիս:

« Ղարաքիլիսայի ճակատամարտը ... բացառիկ մենամարտ էր այս պատերազմի պատմության մեջ»

«...Ղարաքիլիսայի մոտ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել».-Վեհիբ փաշա՝ Կովկասում թուրքական բանակի հրամանատար:

Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը: Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը, Շիրակի և Ջավախքի դիմադրական մարտերը հարստացրին մեր պատմության ռազմական տարեգրությունը, նոր սխրանքներով ու անուններով: Այս հերոսամարտի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես նաև Մեծ եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր: Հայկական կանոնավոր զորքի ու նրան աջակցող աշխարհազորային ուժերի մղած հաջող ռազմական գործողությունները ստիպեցին թուրքական կողմին Բաթումի բանակցություններում մեղմացնել իրենց պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ 1918թ. հունիսի 4-ին կնքել հաշտության պայմանագիր: Այդ ճակատամարտերում ձեռք բերած հաջողություններն արդյունք էին հայ ժողովրդի տարբեր հատվածների, խավերի, ռազմական ու քաղաքական մարմինների միջև հաստատված միաբանության: Այսպիսով՝ Մայիսյան հերոսամսրտերի պատմական

[5] Մ Ա Կարապետյան, Հայ ազատը 1912-1920թթ , Երևան 2009, էջ

գլխավոր դասը համազգային միաբանությունն է: Դժվարին և օրհասական պայմաններում Մեծ եղեռնի և պատերազմի պատճառած մարդկային, նյութական և հոգևոր մեծ կորուստներից դեռևս ուշքի չեկած հայությունը կարողացավ ազգովին ինքնակազմակերպվել: Հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների քաջարի զավակները, համախմբվելով մեկ զորքի մեջ, կռվեցին իրենց հայրենիքի, հարազատ ժողովրդի գոյության, Հայաստանի ազատության և անկախության համար:

Մայիսյան հերոսամարտերով ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը դրվեց: Այսպիսով, ռազմաքաղաքական գործընթացների բերումով հայ ազգային-քաղաքական ղեկավար ուժերը ստանձնեցին Առաջին համաշխարհային պատերազմի կովկասյան ճակատի պաշտպանության ծանր առաջադրանքը, իսկ նորահռչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ: Հետագայում այս հիմքի վրա է, որ Հայաստանի Հանրապետությունը կարողացավ իրավական ճանաչում ստանալ Անտանտի երկրների կողմից, մասնակցել հաշտության խորհրդաժողովին, և, վերջապես, իր տարածքային ու քաղաքական իրավունքները ձևակերպել Սևրի պայմանագրով:

Լրացուցիչ նյութ

Հրաման

Հայոց առաջին կորպուսի

1918թ. մայիսի 16

Ղարաքիլիսա

Թուրքերը, խախտելով զինադադարը, սույն թ. Մայիսի 15-ին, անցան հարձակման և հետ մղեցին մեր զորամասերին, որոնք կանգնած էին Ջաջուռի լեռնանցքներում:

Հրամայում եմ՝ Քուչակ-Գյոկեղշուք, Մեծ Բաշքենդ-Ավդիբենդ գծով մեր դիրքերը պահպանել՝ Ալեքսանդրապոլի ջոկատին՝ իմ պահեստի զորամասերի կազմով (կորպուսի համար 15 հրաման)՝ նրան տրամադրելով նաև 7-րդ, 8-րդ հայկական հրաձգային, Ղարսի բերդապահ հետևակ ու հեծյալ գնդերը և Խանասորի առանձին գումարտակը՝ հայկական 1-ին հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Աբեղյանի ընդհանուր ղեկավարությամբ:

Համար 15 գաղտնի հրամանի համաձայն՝ Ալեքսանդրապոլի ամրացված դիրքերի կազմում ընդգրկված զորամասերին՝ շարժվել դեպի Ղարաքիլիսա, որտեղ նրանց կտրվեն նոր ցուցումներ: Երևանի ջոկատին՝ շարունակել Երևանի շրջանի պաշտպանության իր առջև դրված խնդրի կատարումը:

Ալագյազի ջոկատին՝ մտնել Երևանի ջոկատի կազմի մեջ և թուրքերին գերազանցող ուժերի հարձակման դեպքում հետ քաշվել դեպի Երևան:

Գեներալ Անդրանիկի ջոկատին՝ պաշտպանել Լոռու տափաստանը՝ բազավորվելով Վարանցովկա գյուղում:

Կորպուսի հրամանատար՝ գեներալ- լեյտենանտ Նազարբեկյան

Գլխավոր շտաբի պետ՝ Գեներալ-մայոր Վեշինսկի[6]

[6] Ի. Բեգլ սոյ ան, «Հայ դու կներ», Երևան, « Ամրգամ», 2001թ, էջ 138

Լրացուցիչ նյութ. Արամ Մանուկյան

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպմանը Արամ Մանուկյանը ունեցավ առաջնակարգ մասնակցություն,բացառիկ նշանակություն ունեցան հայության համար:

Արամ Մանուկյանը (ծննդյան անվամբ Սարգիս Հարությունի Հովհաննիսյան) ծնվել է 1879թ.մարտի 19-ին, Արցախ-Ղարաբաղի Շուշի քաղաքում:

Այս տեսակետի կողքին, որ հաստատվում է բազմաթիվ ուղակի և անուղակի փաստերով, պատմագիտության մեջ առ այսօր կա երկրորդ տեսակետ, որը գործչի ծննդավայր է ընդունում Ղափանի Զեյվա գյուղը:

Ինքը՝ Արամ Մանուկյանը, տարբեր աղբյուրներում պարզ և որոշակի իրեն համարել է Ղարաբաղի ծնունդ: Ռուբեն Տեր-Մինասյանի հետ ունեցած զրույցներից մեկում նա հայտնել է «...Ղարաբաղը ես լավ կը ճանաչեմ, քանի որ անոր զավակն եմ»:

Մանկության տարիներին նրան հաճախ անվանել են Սերգեյ: Այդպես էր նաև Կարսում: Միայն 1904թ. վերջից՝ երկիր անցնելու շրջանից նա ընդունեց Արամ անունը: Արամի պատանեկությունը և ուսումնառությունը համընկավ հայ ազգային ու հասարակական-քաղաքական կյանքի աննախընթաց ակտիվացմանը, որի բարձրագույն դրսևորումներից էին թուրքական բռնատիրության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի վերելքը և ազատագրական գաղափարախոսության խորացումը:

Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ, Արամ Մանուկյանը կանխատեսելով, որ թուրքերը չեն բավարարվելու ձեռք բերածով, նախանշել էին իրենց բռնած դիրքը: 1918թ. Մայիսի կեսերին Երևանում գումարված արտակարգ ժողովում նա նշեց .«ես երբեք չեմ հավատար, որ թիւրք բանակը կանգուն պիտի մնայ Ախուրեանի ափին» և իրեն բնորոշ հաստատակամությամբ ավելացրեց, որ. «եթե երբեք մեր ճակատին վրա թիւրքերը սկսեցկն յառաջխաղացումը, մենք պետք է անպայման դիմադրենք զենքով, թնդանոթով, ոչ թե ստրկօրեն անձնատուր ըլլանք և կոտորւինք»:

1918թ. Մայիսի 19-ի առավոտյան, երբ թշնամին նոր էր ներխուժել Արարատյան դաշտ, Արամ Մանուկյանը գեներալ Մովսես Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում, անկարելի համարելով զորքերի հետագա նահանջը և Երևանն ավելի մեծ վտանգի ենթարկելը, վերջինիս հանձնարարեց վերջ տալ հետագա նահանջին, պահպանել դիրքերը և Արարատյան դաշտում թշնամուն հակահարված հասցնելու վերաբերյալ նախօրոք դրված խնդիրն իրագործելու համար վստահեցրեց, որ երկու օրվա ընթացքում զորավարին կտրամադրվի այդ բանի համար ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք

և թիկունքի ոգևորությունը: Թշնամուն հակահարված հասցնելու վերաբերյալ որոշումն ընդունվել էր այդ օրերին զորահրամանատարության մասնակցությամբ Երևանում կայացած գաղտնի խորհրդակցության ժամանակ, այն բանից հետո, երբ Արամը վճռականորեն հայտնել էր բանակի կարիքները կտրականապես բավարարելու պատրաստակամության մադին:

Հայ ժողովրդի համար բարդ իրավիճակում նա ի հայտ բերեց իր ողջ ներուժը՝ անկոտրում կամքը, հեղինակությունը, կազմակերպչական տաղանդն ու եռանդը՝ իր վրա դրված հույսերը, մյուս կողմից՝ ամիսներ առաջ որդեգրված ուղու ճշմարտացիությունը: Արամը, ով սիրում էր ամեն ինչին անձամբ հետևել, կրկնապատկել էր եռանդը. Նա «իբրև շարժական ոգի ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում և կոգևորեր իր խոսքով ու կը ներշնչեր ամենքին»: Նա կարևորում էր ամենքին՝ հոգևորականությանը, բանվորությանը, պատանիներին ու կանանց, և ամենքին էլ գործի լծում:

Մայիսի 19-ի երեկոյան գումարված Ազգային խորհրդի նիստում հարց բարձրացվեց Երևանը թշնամուն հանձնելու, Նոր Բայազետի լեռները նահանջելու և այնտեղից դիմադրական մարտեր մղելու մասին: Հերթական անգամ Արամն ամենայն վճռականությամբ բացառեց անձնատվությունը՝ նշելով. « ...ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակի խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական մուրազներուն վրա, բոլորդ պիտի մնաք և մեռնիք»: Այդ առիթով Ա. Ահարոնյանը գրել է,թե Արամն ուժգնորեն հարվածեց սեղանին և նշեց. « Երևանը չենք դատարկի և պետք է կռուենք, դիմադրենք թշնամուն մինչև վերջին մեր կաթիլ արիւնը, մինչև վերջին գնդակը»:

Բախտորոշ այդ պահին, պատկերավոր գրում է Ս. Աֆանասյանը. «Արամը, ինչպես Վարդանն Ավարայրում, ի հայտ բերեց այդ հերոսապստմանը վայել քաջություն»:

Սարդարապատի մոտ տեղի ունենալիք ճակատամարտի ելքի տեսակետից անչափ կարևոր էր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի բարոյական աջակցությունը, ով կտրականապես հրաժարվեց Էջմիածնից հեռանալ անվտանգ վայր:

Սարդարապատի հաղթանակի լուրը Երևանի Ազգային խորհրդի առջև հավաքված ժողովրդին հաղորդեց Արամը: Այդ մասին Ա.Ահարոնյանը գրել է. «...Արամը երևաց պատշգամբում... հեռագիր կար ձեռքին, յուզմունքից գունատ է, բայց ժպիտ կայ երեսին: Այդ մռայլ մարդը ուրախ է իր ձեռքի խորհրդավոր թերթիկով...Քար լռութիւն: Բազմութիւնն ասես շնչել իսկ դադարել է... Մովսեսը Սինա լեռից ավելի մեծ պատգամ չէր բերել Իսրայելին...»:

Արամը ժողովրդին ներկայացրեց զորավար Սիլիկյանի հեռագիրը, որ Սարդարապատում էր, թե «հինգ օրից ի վեր տեւող ճակատամարտը վերջացաւ թուրքերի կատարեալ պարտութեամբ»:

Սարդարապատը կայացավ Արամ Մանուկյանի կամքի շնորհիվ: Նա արտակարգ իրավիճակ հայտարարեց երկրում և արտակարգ միջոցներ գործի դրեց: Հայը զգաց, որ այլևս նահանջի տեղ չունի, և մարտադաշտ մտավ ոչ թե հաղթելու, այլ ապրելու կամ մեռնելու համար:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Արամ Մանուկյանը ղեկավարել է երկիրը մինչև 1918թ.-ի հուլիսի 23-ը, երբ Երևան ժամանեց Թիֆլիսում ստեղծված ՀՀ կառավարությունը Հ. Քաջազնունու գլխավորությամվ: Նոր կառավարության մեջ Մանուկյանը ներքին գործերի նախարար Խ. Կարճիկյանի սպանությունից հետո, մոտ մեկ ամիս՝ 1918թ.նոյեմբերի 15-ից մինչև 1918 թ. Դեկտեմբերի 13-ը հանրային խնամատարության և աշխատանքի նախարարության պաշտոնակատարն էր:

Մահացել է 1919թ. հունվարի 29-ին, բծավոր տիֆից: Արամ Մանուկյանը վայելել է հայ ժողովրդի սերն ու հարգանքը: Ժողովուրդը նրան ձոնել է երգեր:

Նիկոլ Աղբալյանը Արամ Մանուկյանի մասին ասել է.

...Երբ գիշերը գա, մտեք ձեր հոգու սենյակը, խոսեք ձեր խղճի հետ և ասեք, արդյո՞ք աշխատել եք հայ ժողովրդի համար այնպես, ինչպես Արամը, եղե՞լ եք այնպես անձնազոհ, որքան Արամը, տվե՞լ եք ձեր ամբողջ կյանքը հայ ժողովրդին, ինչպես Արամը...

Եզրակացություն

Այսպիսով, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ ու վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը:

Եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին՝ հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի պետական անկախության համար: Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Մայիսյան հերոսամարտերը դարձավ նոր ժամանակների Ավարայր, որ իր խաղացած դերով նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը և սկսվում է նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը:

Թեմայի դասավանդման մեթոդիկան

Բավականին արդյունավետ կլինի դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրների օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թեավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծեով պրոբլեմային իրավիճակ:

Թեմայի դասավանդումը նախընտրելի է անցկացնել մտագրոհի, հարցադրումների մեթոդներով: Հարցադրումները ձևակերպել այնպես, որ կարողանանք սովորողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ, զարգացնել սովորողների ինքնավստահությունը, ընկալման և պատրաստվածության մակարդակները: Այս թեմայի համար կարևոր է մտագրոհի կազմակերպումը, այն կնպաստի, որ աշակերտները ինքնուրույն դատողություններ անեն, կարևորեն միասնականությունը, ճիշտ դիվանագիտությունը, անկախ, հզոր պետություն ունենալու և հայրենատեր լինելու գաղափարները:

Շատ արդյունավետ կլինի խմբային աշխատանքի կիրառումը: Դասարանը բաժանել 5 խմբի, որոնցից յուրաքանչյուրը կներկայացնի.

1. Սարդարապատի ճակատամարտը
2. Բաշ- Ապարանի ճակատամարտը
3. Ղարաքիլիսայի ճակատամարտը
4. Արամ Մանուկյան գործչին
5. Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը

Իսկ բոլոր խմբերի սեղաններին դրված լինի « Գեներալ Մովսես Սիլիկյանի կոչը հայ ժողովրդին» փաստաթուղթը, որի տակ կլինեն հետևյալ հարցադրումները.

1. Նշել սկզբնաղբյուրի տեսակը
2. Ու՞մ է ուղղված սկզբնաղբյուրը
3. Նշել սկզբնաղբյուրի 2-3 միտք, որոնք ըստ ձեզ կարևոր են և այժմեական
4. Ի՞նչ հարց կուզեիք տալ հեղինակին

Ամփոփելով թեման՝ աշակերտները կարողանան հիմնավորել մայիսյան հերոսամարտերի դերը անկախ պետականության վերականգնման գործում, գիտակցի, որ դա հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնականության հաղթանակն էր:

Թեմայի ամփոփումը կարելի է կատարել քառաբաժան մեթոդի օգնությամբ, նախապես ներկայացնել գծապատկեր հետևյալ հետևյալ հարցադրումներով. Ի՞նչ գիտեի, ի՞նչ իմացա, ինչպե՞ս օգտագործել և ի՞նչ եզրակացություններ արեցի: Գծապատկերը լրացնում են գծապատկերը խմբային աշխատանքի միջոցով:

Մայիսյան հերոսամարտերը պետք է վառ օրինակ հանդիսանան, որ մենք կարողանանք լինել առավել միասնական, առավել ինքնակազմակերպված՝ հանուն հայրենիքի:

Մայիսյան հերոսամարտերի դասավանդումը մեծ նշանակություն ունի ազգային, քաղաքական, գործընթացների համակողմանի լուսաբանման համար:

Գրականության ցանկ

•Սերժ Աֆանասյան <<Սարդարապատի հաղթանակը>>(Հայաստան,մայիս 1918) Երևան-1991թ.

•Հայոց պատմության 8-րդ դասարանի դասագիրք խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Բարխուդարյանի Երևան 2003թ.

•Կոսոյեան Հ.<<Դրոշակ>> 1928թ. N 5

•Հ. Ավետիսյան <<1918թ, Մայիսյան հերոսամարտերը և ՀՀ հռչակումը>>

•Ա.Ահարոնյան <<Ավարայրի ոգեկոչումը,Անդրանիկ>>Երևան 1991թ.

•Արամ Մանուկյան (ՀՅԴ) Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան

•<<Հայոց պատմություն.նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.)>>հատոր IV,գիրք I,խորհուրդ՝ Վ.Բարխուդարյան և ուրիշներ,ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,<<Զանգակ-97>> 2010թ.

•Ի.Բեգլարյան <<Հայդուկներ>> <<Զանգակ-97>> 2001թ.

•Մ.Ս.Կարապետյան <<Հայաստանը 1912-1920թթ.>>Երևան 2003թ.